ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

ՀԱՎԱՏՔԸ ԳՈՐԾԵՐՈՎ Է ԱՐԴԱՐԱՑՎԱԾ
ВЕРА ДЕЛАМИ ОПРАВДАНА

ЛУСАВОРИЧ

ՎՈԼԳՈԳՐԱԴԻ ՄԱՐԶԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ
ГАЗЕТА АРМЯНСКОЙ ОБЩИНЫ ВОЛГОГРАДСКОЙ ОБЛАСТИ

№ 1 (62) Հունվար-Փետրվար 2014 թիվ
№ 1 (62) Январь-Февраль 2014

Празднование Святого Рождества и Богоявления

6 января, с раннего утра в церкви «Сурб Геворг» города Волгограда царило праздничное настроение. По случаю праздника Святого Рождества и Богоявления Господа нашего Иисуса Христа, в церкви Святого Георгия была отслужена Святая и Бессмертная Литургия. Богослужение провел духовный пастырь армян Волгограда священник Малахия Оганян.

Во время Святой Литургии Отец Малахия зачитал послание Его Святейшества Гарегина Второго, Верховного Патриарха и Католикоса всех армян, по случаю праздника Святого Рождества и Богоявления Господа Нашего Иисуса Христа. Благая весть Рождества Христова и Богоявления распространилась в церкви.

По окончании Богоявленской Литургии Отец Малахия, Святым Крестом и Святым Миро совершил обряд освящения воды, в память Крещения Иисуса Христа в водах Иордана.

Хачкавором церкви «Сурб Геворг» в нынешнем году был избран председатель попечительского совета церкви Артур Вардгесович Мартиросян, именитый предприниматель и благотворитель, возглавивший организационные работы по ведению хода строительства новой армянской церкви Волгограда.

На празднике Святого Рождества и Богоявления присутствовал представитель Русской Православной Церкви Волгоградской Епархии – настоятель

Церкви во имя Равноапостольного князя Владимира иеромонах Христофор Казанцев.

Отец Христофор поздравил со светлыми праздниками Святого Рождества, Богоявления и Крещения и обратился к собравшимся с добрыми пожеланиями, отметив, - Я рад, что могу разделить с Вами ту великую радость, которая объединяет этим праздником - Рождения Богомладенца.

После праздничной Святой Литургии все верующие вместе со своим духовным пастырем направились в большой зал трапезной, где всех ожидали угощения праздично-накрытых столов и матах, преподнесённый семьёй хачкавора Артура Мартиросяна.

Подняв бокалы за непоколебимость веры Христовой, прихожане вновь поздравили друг друга с Рождеством и Новым Годом, пожелали, чтобы 2014-й год был наполнен благой вестью Святого Рождества, принёс мир и добро в каждую семью. Торжественное празднование прошло в сопровождении таинственных мелодий национального дудука в исполнении Давида Абачьяна и армянских весёлых песен сольных исполнителей Армена Бадаляна и Сюзанны Мелконян, и, конечно же, всего собравшегося верующего люда. Радовал присутствующих не только новогодне-нарядно украшенный зал с ёлкой, но и яркость красок картин молодой художницы Ани Айрапетян, экспонируемых в зале притчевого дома, занявшей первое место среди юных художников Южного Федерального округа.

Вечером следующего дня, по сложившейся многолетней традиции, волгоградские армяне собрались в одном из ресторанов города, где в большом семейном кругу отметили рождественский праздник, организованный церковным молодёжным союзом «Айк», возглавляемым Арсеном Африкяном. В праздничном мероприятии выступили волгоградские армянские танцевальные и песенные коллективы - «Артуйт» и «Армения». Все присутствующие воедино пустились в пляс под звуки народных мелодий в виртуозном исполнении скрипача Герасима Арутюняна и под песни Армена Бадаляна и Сюзанны Мелконян.

В этот вечер состоялась и премьера выступления младшей группы новосозданной хореографической студии «Аревик». Детишки, в сопровождении своей наставницы, молодой, но уже довольно опытной, руководительницы Лусине Тигранян представили на суд зрителей театрализованную танцевальную композицию про мышонка «Пуй-Пуй мкник».

Праздник в честь Святого Рождества и Богоявления наиболее любим и популярен во всем христианском мире. Армяне Волгограда, по традиции, и в новом году с большим ликованием и радостью встретили этот любимый и прекрасный праздник.

ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

Ս. Ծննդյան և Աստվածայտնության տոնին Հայրապետական պատարագ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Հունվարի 6-ին՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածայտնության տոնին, Միածնեաէջ Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Պատարագի սկզբում հայրապետական խաչվառագարդ թափորը Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին ամահովանիով առաջնորդեց Մայր Տաճար: Ամպհովանավիկիրներն էին՝ սուրանահայրարքերաք Հրաչ Մարտիկյանը, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Էլբակյանը, արվեստաբան Շրավարդ Հակոբյանը և ՀՀ վաստակավոր արտիստ Տիգրան Ներսիսյանը: Նորին Սրբությանը որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանը և Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Ս. Ծննդյան Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ավետեց Տիրոջ Ծննդյան բարի լուրը և այդ առիթով հայրապետական իր պատգամը ուղղեց համայն հայությանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՒ

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ես եմ ճանապարհն և ճշմարտութիւն և կեանքը» (Յովհ. ԺԴ 6):

Սիրելի հավատավոր ժողովուրդ ի Հայրենիս, Արցախ և ի Սփյուռս.

Քրիստոսի՝ մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան բերկրանքով այսօր մեր հոգիները գոհաբանությունն են բարձրացնում առ Աստված: Փառաբանում ենք մեր Փրկչին՝ Բեթղեհեմում ծնված մանուկ Հիսուսին: Սուրբ Ծննդյան օրհնյալ օրը երկիրը երկինք դարձավ, և նրանում ծագեց Արդարության արեգակը՝ Հիսուսը: Հոգևոր լույսով լուսավորելու համար մարդկային հոգիները, որպեսզի ճանաչեն, տեսնեն ու գտնեն իրենց փրկությունը:

Աստծո Որդին խոնարհվեց երկնային բարձունքներից, մարդացավ ու աշխարհ եկավ՝ բանաորկուի խաբեությամբ դրախտից վտարված մարդուն ազատելու մեղքից և մեղք սերմանող սատանայի իշխանությունից: Եկավ, սակայն ոչ թե զորությամբ և իշխանությամբ, այլ խոնարհ ու հեզ կերպարանքով՝ ծնվելով մսեղեն կնոջից, ենթարկվելով օրենքին, ապրելով մարդկային կյանքի բոլոր պայմանները, բացի մեղքից: Նա եկավ ոչ թե դատելու աշխարհը, այլ փրկելու այն: Նա եկավ ոչ թե ծառայելու, այլ ծառայելու և իր կյանքը տալու որպես փրկագին շատերի համար: Նա եկավ ոչ թե իր կամքը կատարելու, այլ Հորը, Ով ուղարկել էր Իրեն: Նա եկավ ոչ թե Իր կամքը պարտադրելու, այլ ազատ կամքով ընդունելու Աստվածային կամքը: Նա եկավ ոչ թե Իր կամքը պարտադրելու, այլ ազատ կամքով ընդունելու Աստվածային կամքը: Նա եկավ ոչ թե Իր կամքը պարտադրելու, այլ ազատ կամքով ընդունելու Աստվածային կամքը:

Ճշմարտությունը և կյանքը Իր անձի հետ նույնացնելով՝ մեր Տերը ճշմարտությունը հավասար արժեք հռչակեց կյանքին: Նա ճշմարտության ճառագայթներով ցրեց մարդկային մոլորությունների ու մեղսագործությունների խավարը և պարգևեց մարդկանց ճշմարտության Սուրբ Հոգին (Յովհ. ԺԴ 17), որպեսզի մարդկության ընթացքը հաստատվի խաղաղության ու արդարության, միմյանց հանդեպ սիրո և ազնվության վրա հիմնված կյանքի մեջ:

Տիրոջ փրկագործությամբ պարտության կրած չարն այսօր էլ մոլեգնությամբ պատերազմում է մարդկային հոգիների համար, փորձելով մշուշով պատել Քրիստոսի բերած ճշմարտության լույսը« որպեսզի մարդիկ չտեսնեն դեպի երկինք տանող ճանապարհը և խաբեության որոգայթներում մոլորվելով՝ զրկվեն երկնային արքայության հավիտենական կյանքից: Չարը դադար չունի, գործում է օրնիբուն և գործում է մարդկանց միջոցով: Չարը ճանապարհ է հարթում, երբ կյանքում պակասում է նախանձախնդրությունը ճշմարտության հանդեպ, և սուտը գտնում է իր համակիրներին: Չարի խաբեպատիր ընթացքները զորանում են, երբ մարդը հեռանում է Քրիստոսի ուսուցանած սկզբունքներից՝ կյանքը լցնելով կեղծիքներով ու խեղաթյուրումներով: Այսպես է, որ իրողությունների ներկայացումը ձևափոխվում է բանաորկության և անճիշտ գնահատականների, կրոնի ընկալման մեջ կամայական ու շահախնդիր մեկնաբանությունները ծնունդ են տալիս աղանդների, մարդու իրավունքի պաշտպանության պահանջով պատռտդրվում են երբեմն նաև հասարակության մտածելակերպին ու արժեհամակարգին անհարիր բարքեր: Այսպես է« որ աշխարհում բարոյականությունը տեղի է տալիս ապաբարոյականության առջև, խոսքի ազատությունը վերածվում է խոսքի սանձարձակության, վկայությունը՝ ճշմարտության խեղումի: Ճշմարտությունը ենթագիտելով քաղաքական շահերը հաճախ հակադրվում են արդարության ու խաղաղության, նյութականի մոլուցքը, եսակենտրոն ձգտումները՝ գթության ու մարդասիրությանը՝ աշխարհում բազմացնելով հակամարտությունները, վիշտը, կարիքն ու նեղությունները:

Կյանքն այնպիսի այսպիսի իրողություններից աշխարհը կձերբազատվի, երբ մարդիկ ընդունեն Քրիստոսի ճշմարտությունը, երբ իրենց հավատավոր գործերով վկայեն Տիրոջ ներկայությունը և առաքյալի պես բարձրաձայնեն. «Իմ մէջ կայ Քրիստոսի ճշմարտութիւնը» (Բ Կորնթ. ԺԱ 10): Ճշմարտությունը կրելով միայն, մարդկությունը կարող է ապահովել կյանքի առաջընթաց, բարեփոխում, բարի արդյունք ու զարգացում, քանզի ոչինչ մնայուն չի կառուցվում խաբեության վրա, ոչ մարդկային հարաբերություններ, ոչ բարվոք հասարակական կյանք ու պետականություն: Երբ ճշմարտությունը մարդկանց մեջ չէ, արժեզուրկ են նվիրում, արդարություն, եղբայրսիրություն, բայց ճշմարտությամբ առնում են զորություն և գործի վերածվելու ուժականություն:

Մեր իրականության մեջ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, նույնպես, ցավոք, տեղ են գտնում վատաբանությունն ու բանաորկությունը, անտարբերությունը երկրի ընդհանուր բարիքի նկատմամբ: Նահանջ են ապրում ընտանեկան ավանդական արժեքները, դժվարությունների առջև՝ հանձնառության ոգին: Պատասխանատվությունը ստորադասվում է իրավունքին, անզուսպ պահվածքն ու վիրավորանքը ընկալվում է որպես քաջություն: Սեփական կարծիքն արտահայտելու իրավունքը հաճախ ի չարս է գործադրվում ճշմարտությունն աղավաղելու, կողմնակալ տեսակետներ տարածելու համար: Այսպիսի մտայնությանց մեջ սուտը քողարկվում է ճշմարտության դիմակով, բանավեճը դառնում է վիճաբանություն, քննարկումը վերածվում բամահրանքի ու դատապարտության խոսքի, որոնցից հեռանում է Աստծո ճշմարտության Հոգին, Աստծո իմաստությունը, և մենք դժվարանում ենք, այո, նույնիսկ դադարում ենք տեսնել բարին, արդարը, ու մեր կյանքում տկարանում են միմյանց հանդեպ հավատն ու վստահությունը և գալիքի հույսն ու լավատեսությունը:

Բեթղեհեմում ծնված Մանուկն է, սիրելի հավատավոր ժողովուրդ, ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը: Նրան պիտի ապավինենք, մեր սրտերում Նրա ճշմարտությունը կրենք, որ վերափոխվի մեր կյանքը, լցվի աներկյուղ վստահությամբ, դժվարությունները հաղթահարելու և ամեն բան Աստծո բարերար կամքով ուղղելու զորությամբ: Ճշմարտությունն ազատարար է: «Եւ կ՚ճանաչէք ճշմարտութիւնը« և ճշմարտութիւնը կազատի ձեզ» (Յովհ. Ը 32),- ասում է մեր Տերը: Ապրենք ու գործենք Քրիստոսի ճշմարտությամբ, Նրա խոսքն ու պատգամները դարձնենք մեր կյանքի խավարացիր լույսը, մեր հանդեպ Նրա սերն ու ողորմությունը՝ մեզ միավորող ուժը, ազգի միասնությունը կերտող զորությունը: Անխախտ ու ամուր պահենք մեր միաբանությունը, համերաշխության ոգին, խնամք տանենք և հոգանք միմյանց համար, մեր երկրի, հոգևոր և ազգային մեր կյանքի վերելքի համար: Միայն այսպես, միմիայն այսպես պիտի կերտենք շեն ու բարօր մեր Հայրենիքը: Միայն այսպես կարող պիտի լինենք Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցը դարձնել մեր արդար դատի հաղթանակի հանգրվան և բարվոք, արդար լուծման առաջնորդել արցախյան հիմնախնդիրը: Այսպես կենսունակ պիտի պահենք Սփյուռքը, հույս ու ապավեն դառնանք և նեցուկ լինենք հակամարտության ցավալի իրողությունները կրող սիրիահայ մեր եղբայրներին ու քույրերին: Եվ թող մեր բոլոր գործերը Տիրոջով լինեն:

Այս մաղթանքով, Սուրբ Ծննդյան ավետիսով մեր ողջույնն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եղեռնաց Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին, Հայ Եկեղեցու ուխտապահ ու նվիրյալ ողջ հոգևոր դասին, մեր քույր Եկեղեցիների շնորհազարդ հոգևոր Պետերին:

Հայրապետականօրհնությամբև Սուրբ Ծննդյան շնորհների հայցով ողջունում ենք Սուրբ Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Սերժ Սարգսյանին և առաջին տիկնոջը: Մեր ողջույնն ենք հղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ տիար Բակո Սահակյանին, հայոց պետական ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Աստվածակառույց Սուրբ Էջմիածնից, մեր Տիրոջ և Փրկչի Իջման Սուրբ Վեղանից Սուրբ Ծննդյան ավետիսով Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ի սփյուռս աշխարհի հավատավոր համայն մեր ժողովրդին:

Այս բերկրալի օրը հայցենք, որ Փրկչի Ծննդյան շնորհները մշտասփյուռ լինեն աշխարհում, և մարգարեի մաղթանքով՝ ճշմարտությունը և ողորմությունը հանդիպեն, արդարությունն ու խաղաղությունը համբուրվեն (Սաղմ. ՁԴ 11):

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ծննդյան լուսազարդյալ շողերը պայծառացնեն մեր Սուրբ Եկեղեցին, մեր Մայր Հայրենիքը, աշխարհասփյուռ հայ կյանքը, որ այն լինի փառաբանություն Բարձրյալն Աստծուն և պարգևի ազգիս մշտապես հոգևոր անհուն ուրախություն, և մենք այսօր և միշտ խնդությամբ ավետենք.

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ,
ձեզ և մեզ մեծ աւետիս:

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Ջրօրհնեքի արարողությունը: Մայր Տաճարում ջրօրհնեքի խաչի կնքահայրն էր Հայ Եկեղեցու մոսկվաբնակ բարերար Հայկ Մադաքյանը:

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը և կառավարության անդամներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, կրթության, գիտության և մշակույթի ներկայացուցիչներ:

Ս. Պատարագից հետո Ալեք և Մարի Մանուկյան Գանձատան սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Նորին Սրբությունը վերստին իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց ներկաներին Ս. Ծննդյան և Աստվածայտնության տոնի առիթով:

Սուրբ Պատարագ Հայոց բանակի օրվա առիթով

Հունվարի 26-ին՝ Բանակի օրվա առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Հայոց բանակի հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ բանակի բարձրագույն սպայական կազմը, Հայկական Բարեգործական Ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանը և ՀԲԸՄ անդամներ:

Ս. Պատարագի ընթացքում իր քարոզում Վրթանես Սրբազանը անդրադարձավ հայ ժողովրդի կյանքում հայոց բանակի ունեցած կարևոր դերին ու նշանակությանը: «Հայտնի ճշմարտություն է, որ քրիստոնեությունը խաղաղության ու հանդուրժողականության, համերաշխության ու ներդաշնակության, այսինքն՝ սիրո կրոն է, որ մարդկանց թելադրում է աշխարհում ապրել առանց տարաձայնությունների ու թշնամանքի: Թվարկված պայմանները ցանկալի են բոլորիս համար: Ամենքս էլ, սակայն, գիտակցում ենք, որ այսօր իրականության մեջ թվարկվածները պակասում են, ուստի անհրաժեշտություն է դառնում ունենալու մի զորավոր պատնեշ, որը կարող է հակադրվել բռնությանն ու բիրտ ուժին: Ամեն երկրի համար այդ զորությունը բանակն է: Քանի դեռ երկրի վրա տիեզերածավալ խաղաղություն և մարդկանց միջև հաճություն չի հաստատվել, բանակն անհրաժեշտ պայման է ճնում պետությունների ներքին և արտաքին անդորրն ապահովելու համար…

Մեր պետության պարագային զենքն ու բանակը երկրին կենսականորեն անհրաժեշտ են պաշտպանվելու նպատակով ու ոչ թե ագռոտների և ոոնձագություների՝ այլոց վրա արշավելու, ուրիշի սահմանները զավթելու և անմեղների արյունը հեղելու համար: Բանակներ կան, որոնք մահ են սփռում, բանակներ էլ՝ որոնք վերահաստատում են խաղաղությունն ու սերը: Ինքնապաշտպանությունը մարդու բնական, անկապտելի իրավունքներից մեկն է, որ ստիպում է ունենալ ուժեղ բանակ: Մեր երկրի վրա եկող թշնամին պետք է գիտակցի, որ իր բռնության դիմաց կարող է համարժեք պատասխան ստանալ. սրով է գալիս՝ կարող է սրից էլ ընկնել: Խաչը հոգևոր զենք է ընդդեմ չարի, որ պահպանում է ամեն ապավինողի, իսկ շրջվելով՝ դառնում ֆիզիկական զենք՝ պաշտպանելով նաև խաչին ապավինողի մարմինը: Այս առումով, հայ զինվորը պարտի գիտակցել, որ հաղթանակները չեն տրվում միմիայն զենքով, այլ հավատքի այն զորությամբ, որ դարեր շարունակ սերմանել են մեր մեջ մեր սուրբ և Քրիստոսաշավիղ հայրերը», - իր խոսքում մասնավորապես նշեց Սրբազան Հայրը:

Ս. Պատարագի ավարտին Մայր Տաճարի Իջման Ս. Սեղանի առջև, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանք՝ ի շինություն և ի պայծառություն Հայաստան աշխարհի ու Հայոց բանակի:

Հանրապետական մաղթանքիցհետո Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ներկաներին մեկ անգամ ևս ամենքին շնորհավորելով Հայոց բանակի 22-րդ տարեդարձի առիթով: Իր խոսքում Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ Հայոց բանակն իր զինվորների ու զորականների անձնվեր ծառայության շնորհիվ այսօր ապահովում է երկրի խաղաղությունը՝ անվրդով կյանք ստեղծելով մեր ժողովրդի ու Հայրենիքի համար: Վեհափառ Հայրապետը ՀՀ Զինված ուժերի սպասավորներին մաղթեց Տիրոջ օրհնության ներքո երկար տարիների քաջառողջ կյանք, արդյունավոր ծառայություն և նորանոր ձեռքբերումներ ի սեր Մայր Հայրենիքի և ի փառս մեր ժողովրդի:

Այնուհետև տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն: Ի գնահատություն Հայրենիքին ու հավատավոր ժողովրդին մատուցած ծառայությունների, Վեհափառ Հայրապետը Հայոց բանակի հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի միջնորդությամբ Հայ Եկեղեցու «Սբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով պարգևատրեց գեներալ-մայոր Սամվել Կարապետյանին, գեներալ-մայոր Պողոս Պողոսյանին, տիար Գառնիկ Հայրապետյանին, գնդապետ Դանիել Բալայանին և գնդապետ Օնիկ Գասպարյանին:

Հայրապետական սրբատառ կոնդակն ընթերցեց Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը: «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայոց Բանակի օրվա առիթով բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները և գոհունակությամբ անդրադառնում Հայրենի մեր երկրին մատուցած Ձեր ծառայություններին: Արցախյան հերոսամարտի տարիներին հազարավոր մեր հերոս զավակների հետ միասին Դուք Ձեր կարողությունները հոգու ողջ ևվիրումով ի սպաս բերեցիք մեր Հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Աստվածպարգև մեր հողի ազատագրման ծանր ու երկարատև պայքարում մեր ռազմական հաջողությունները կերտվեցին Ձեզ պես հայորդիների քաջության ու անձնազոհության շնորհիվ, ովքեր արիաբար դիմակայեցին հակառակորդի բոլոր հարձակումներին և հաղթական էջեր հավելեցին մեր արդի պատմությանը: Զինադադարի պայմաններում Դուք շարունակում եք տարբեր պաշտոններում արդյունավոր ծառայությամբ ավանդ բերել Հայոց Բանակի զորացմանը՝ իխնդիր մեր երկրի ու ժողովրդի ապահովության ու առաջընթացի: Ձեզ շնորհված բազմաթիվ պետական ու զինվորական կոչումներն ու պարգևները արժանի վկայություն են տասնամյակների Ձեր գովարժան վաստակի», - մասնավորապես նշված է շքանշանակիրներին շնորհված Հայրապետական կոնդակում:

НОВОСТИ ЕПАРХИИ

РУКОПОЛОЖЕНИЕ ВО СВЯЩЕННИКИ В КАФЕДРАЛЬНОМ ХРАМЕ ПРЕОБРАЖЕНИЯ ГОСПОДНЯ ГОРОДА МОСКВЫ

9 февраля в кафедральном храме Преображения Господня г. Москвы во время Святой литургии архиепископ Езрас Нерсисян впервые за 14 лет своего предводительства Российской и Ново-Нахичеванской епархии совершил Таинство рукоположения.

По благословению Верховного Патриарха и Католикоса Всех Армян Его Святейшества Гарегина Второго архиепископ Езрас призвал к священству дьяконов Мгера Бекназаряна и Даниэля Хананяна. В предшествующий этому день перед вечерним богослужением был совершен чин исповедания, во время которого рукополагающиеся засвидетельствовали свое православное вероучение и дали обет верности святой Армянской апостольской церкви.

Во время Святой литургии владыка святым миром помазал чела и длани нарекая их новыми именами, дьякон Мгер был наречен именем Григор, а дьякон Даниэль именем Нерсес.

После этого Владыка произнес проповедь и обратился к новорукоположенным священнослужителям с наставлением. «Утешение и радость для нас, что впервые в нововозведенном кафедральном храме было совершено Таинство рукоположения во священники двух смиренных, благочестивых служителей церкви. Уверены, что нарекаясь именами двух великих армянских святых - Григора и Нерсеса, дух святых патриархов будет вести новорукоположенных священников на протяжении их служения, восхваляя Отца Небесного они будут способствовать процветанию духовной жизни армянского народа, призывать людей к Господу и повсюду распространять свет Евангелия. Будем молиться, дабы Господь даровал двум смиренным чадам крепость духа, неисчерпаемую любовь, дабы они были примером истинных христиан и благочестивых священнослужителей», - сказал архиепископ Езрас.

По окончании священного чина присутствующие поздравили новорукоположенных и приложились к челам и дланям отца Григора и отца Нерсеса.

Как духовенство, так и прихожане были объяты духовной радостью.

Отец Григор поделился своими чувствами, говоря: «Благодарим Господа, за вверенное нам служение. Буду молиться Всевышнему, дабы Он даровал мне непоколебимую веру и силу духа для совершения Богоугодной миссии».

«Великая ответственность перед Господом и народом возложить на себя сан священства. Молюсь Всевышнему, дабы соделал меня достойным этого высокого призвания и укрепил в пастырском служении», - сказал отец Нерсес.

После сорокадневного молитвенного периода новорукоположенные священники продолжат свое служение в Российской и Ново-Нахичеванской епархии ААЦ.

Пресс-центр Российской и Ново-Нахичеванской епархии ААЦ

Խաչելություն և արդարություն



Յուրաքանչյուրս մեր կյանքի ընթացքում ապավինել ենք Քրիստոսի խաչի զորությանն ու օգնությանը: Այն մեզ համար եղել է հույսի աղբյուր և ամուր հենարան: Մյուս կողմից էլ՝ խաչի խորհուրդը պատմության ընթացքում շատ անգամ էշահարկվել, նոմանքխաչի նշանով նաև ոճրագործություններ են կատարել ու չարաշահել այդ սրբության խորհուրդը, օրինակ՝ խաչակրաց արշավանքը: Խաչի անունով ու նշանով մարդիկ փորձում էին հարստանալ, նոր տարածքներ զավթել և իրենց իշխանության տիրույթներն ավելի ընդլայնել: Այսինքն, խաչը մարդկության պատմության մեջ եղել է և՛ որպես գայթակղության առիթ, և՛ որպես Աստծուն գտնելու, և՛ Աստծո հետ ուխտ նորոգելու առիթ: Նայած, թե մենք ինչպես ենք մոտենում այս խորհրդին: Խաչի խորհուրդը հնարավորություն է տալիս մեզ նորոգվելու, նորովի ապրելու, կյանքը նորից վերսկսելու՝ օգտագործելով ամեն մի վայրկյանը: Սբ. Գրիգոր Նարեկացին ասում էր. «Տեր Աստված շատ ավելի հեշտ է նոր մարդ ստեղծելը, քան թե մարդուն նորից կենդանացնելը»: Սա բացառիկ խորհուրդ է, որն ունի միայն քրիստոնեությունը: Եվ այս խորհրդի հիմքում հենց խաչի խորհուրդն է: Իսկ մյուս կողմից, մենք եթե փորձենք խաչի խորհուրդը վերլուծել, պետք է մի շատ կարևոր հարց տանք. «Ո՞վ խաչեց Քրիստոսին»: Պատասխանը մեկն է. Քրիստոս Ինքն Իրեն խաչեց: Քրիստոս Ինքն ասաց, որ ոչ մեկը Իր կյանքը չի առնում, այլ Ինքն է այն կամովին տալիս: Սա շատ կարևոր է, քանի որ Քրիստոս Ինքը կամովին Իր կյանքը մատնեց մարդկանց փրկության համար: Վերջին հաշվով Քրիստոսին ոչ ոք չխաչեց: Մարդիկ ընդամենը մասնակից եղան Քրիստոսի խաչելությանն ու այդ մասնակիցներից շատերը դարձի եկան՝ զինվորները, ծերակույտի անդամները, պարզ հետաքրքրասեր մարդիկ, ավազակներից մեկը: Խաչելության ժամանակ մարդիկ տեսնելով արեգակի խավարումը, տաճարի վարագույրի մեջտեղից պատռվելը, երկրաշարժը, տարօրինակ դրսևորումները, մեռելների հարություն առնելը՝ հասկացան, որ իրենք երկնքի և երկրի թագավորին խաչեցին: Ասում էին. «Իսկապես որ սա Աստծու Որդին էր» (Մատթեոս 27.54):

Մենք էլ այսօր մասնակից ենք խաչելության թափորին և այդ պատմությանը՝ մեր մեղքերով, սխալ որոշումներով և կյանքի սխալ ընթացքով: Հետևաբար, եթե այլ կերպ բացատրելու լինենք, ապա Քրիստոսին խաչեցին մարդկային «չեմուզում», «չեմկարող», «անհնարին է», «ինձ չի հետաքրքրում», «չեմ սիրում» և նման այլ դրսևորումներ: Սրանց պատճառով էր, որ Քրիստոս հանձն առավ խաչի մահը, որովհետև իրապես «չեմ սիրում»-ը, «չեմ կարող»-ը, «անզոր եմ», «տկար եմ», «հիվանդ եմ», «վատն եմ» և նման դրսևորումները ինքնըստինքյան բուժվել կամ լուծվել չէին կարող: Սակայն, երբ ասում ենք, որ կոնկրետ մարդ չկա Քրիստոսին խաչող, սա չի նշանակում, որ մեղավորներ պետք չէ փնտրել և կամ մեղավորներ առհասարակ չկան: Պարզապես մենք պետք է կարողանանք տեսնել, թե որքան պարզ, էժան, մարդկային առումովոչինչչարժեցող որոշայթներ էին լարված Քրիստոսի դեմ: Այս ամենը մարդկային փոքրոգության հետևանքը է: Հետևաբար Քրիստոս խաչվեց մարդկային փոքրոգության պատճառով:

Խաչելության խորհրդին նայելիս, տեսնում ենք Աստծո արդարության խորհուրդը. չէ՞ որ Քրիստոսի խաչելությամբ հաստատվեց Աստծո արդարությունը: Հովհաննու ավետարանի 16-րդ գլխում կարդում ենք խաչելությունից առաջ Քրիստոսի աղոթքը բարձրացրած առ Աստված: Այնտեղ Քրիստոս շեշտում է, որ Հայր փառավորիր Ինձ այն նախկին փառքով, որ ունեի մինչև երկիր գալը և դրանով Դու իսկ ցույց կտաս Քո արդարությունը: Այսինքն, Քրիստոսի անձի փառավորումը Աստվածային արդարության դրսևորումն էր, իսկ Քրիստոս փառավորվեցԽաչովև Հարությամբ: Աստվածային արդարությունը յուրաքանչյուրիս համար կենդանի օրինակ է, որովհետև այն բոլոր որակները, որ մենք տեսնում ենք Աստվածային դրսևորման մեջ, միայն Աստծուն չի պատկանում, դա նաև յուրաքանչյուրիս համար է: Քրիստոս Ինքը մեզ ցույց տվեց, ապացուցելով, որ հնարավոր է ապրել բոլոր այս խորհուրդներով, իրականություն դարձնել բոլոր այն պատգամները, որոնք Աստված մեզ տվեց:

Արդարությունը կարևոր զենք է յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքում: Առանց արդար լինելու հավատացյալ երբեք չենք լինի: Մեր հավատքի ամրությունը կախված է մեր արդարությունից: Իսկ որքանո՞վ ենք մենք արդար: Քանի որ արդարությունից է ծնվում հավատքը: Հիշենք Աբրահամի օրինակը: Աբրահամը ինքն արդար էր և այդ արդարությունը նրան երկնային պսակի արժանացրեց, քանի որ նա ապրում էր Աստծո հետ կենդանի հարաբերության մեջ: Աբրահամը վաղվա օրով կամ անցյալով չէր ապրում, ինչպես որ մենք ենք շատ հաճախ անում: Մեզ համար, ցավոք սրտի, ներկան երբեք նպատակ չի դառնում: Մեզ համար միշտ նպատակ է ապագան, ինչը սխալ է: Իրականում մենք պետք է կարողանանք ապրել ներկայով, ինչն արդարություն է և արդար որոշում: Օրինակ, Աստված Աբրահամին տվել էր միութիւն մի որդի՝ Իսահակին, իսկ հետո էլ ասաց, որ իր որդուն զոհաբերի: Աբրահամը չմտածեց՝ ինչպես կլինի. չէ՞ որ Աստված խոստացել էր, որ իր սերունդը ծովի ավազի չափ պիտի բազմացնի, հիմա էլ ասում է որդուդ տար զոհաբերիր: Աբրահամը չընկավ նման մտածումների մեջ, թեև, եթե մենք լինեինք, բնականաբար, պիտի մեր «արդարությունը» մեզ սովորեցներ, որ մենք մտածեինք այդ վարվելու օրվա մասին՝ ապագայի մասին: Բայց Աբրահամի արդարությունն այն էր, որ ինքը մտածեց ներկայի մասին, ապրեց այդ ներկայով՝ չկասկածելով Աստծո խոստումին: Այսօր այդ ապագան իմաստ ունի այնքանով, որքանով մենք մեր ներկան ապրում ենք արդար և ճիշտ որոշումներ կայացնում ներկայի մեջ: Աբրահամի այս արդարությունն է պատճառը, որ Աստված աշխարհ ուղարկեց Իր միածին Որդուն: Աբրահամն այստեղ հանդես եկավ մեր փոխարեն՝ ամբողջ մարդկության անունից: Մենք ի զորու չենք մեր զավակին և առավել ևս միակ զավակին ընծայելու Աստծուն: «Աբրահամ» բառը նշանակում է ազգերի հայր և ինքը գնաց այս քայլին որպես ազգերի հայր, ոչ թե որպես Իսահակի հայր: Այս ամենին ի պատասխան Աստված Իր միածին Որդուն տվեց մեզ, սա աստվածային արդարության դրսևորում է և սրանից ծնվում է նաև հավատքը: Մենք մեր կյանքի ընթացքում այս արդարության կարիքն ունենք և հենց այս արդարությունից է ծնվում հավատքը: Մեր կյանքը կարող ենք ամեն կերպ որակել, շատ պատկերավոր ներկայացնել, բայց միշտ չէ, որ դա արդար է: Բայց, գոնե ինքներս մեզ հետ պիտի լինենք արդար: Ինչպիսի վիճակում էլ, որ մենք լինենք, մենք և Աստված գոյություն ունենք և սա ամենամեծ արդարությունն է: Աստվածային ամենամեծ արդարությունը հենց սա է, և մեր հավատքը պիտի ծնվի հենց այս արդարությունից, որ կամ ես և կա Աստված: Գուցե չկա իմ ուզած երջանկությունը, իմ պատկերացրած հարստությունը, իմ պատկերացրած մարդկային հարաբերությունները, գուցե չկա այն իմ պատկերացրած կյանքը, որի մեջ ես ինքս ինձ երջանիկ կտեսնեի, շատ բաներ չկան, բայց դրանք մատնացույց անելը և դրանցով ապրելը արդարություն չէ: Արդարությունն այն է, որ գոյություն ունեմ ես և Աստված: Եվ արդարությունն այն է, թե որքանով ես և Աստված կարող ենք խոսել մեկս մյուսի հետ և որքանով իմ և Աստծո հարաբերությունը կարող է կառուցված լինել այն անպակաս և անմնացորդ սիրո վրա, որի խորհրդանիշը դարձավ Քրիստոսի խաչը: Արդարություն է, որովհետև մեզ սովորեցնում է ոչ միայն մեր կյանքում սիրո պակասությունը տեսնել, այլ նաև մեր կյանքի մեջ չարիքը տեսնել:

Տ. Եսայի քհն. Աբթենյան

Президент Армении посмертно наградил Армена Ованнисяна Медалью «За заслуги перед Отечеством» первой степени

Младший сержант Армен Ованнисян, героически погибший при отражении атаки диверсантов ВС Азербайджана в ночь на 20 января с.г. на боевом посту в Нагорно-Карабахской Республике, указом президента Армении Сержа Саргсяна посмертно награжден Медалью «За заслуги перед Отечеством» I степени.

Награда присуждена за исключительную храбрость в деле защиты Родины, личное мужество, высокую профессиональную подготовку, самоотверженность при исполнении служебного долга в условиях, представляющих угрозу для жизни.

Медаль была вручена родителям погибшего военнослужащего лично главой армянского государства Сержем Саргсяном на церемонии награждения по случаю отмечаемого 22-летия формирования ВС РА. Присутствующие минутой молчания почтили память героя.

Напомним, в ночь с 19 на 20 января с.г., в период с 23:50 по 00:15 по местному времени, на северо-восточном (Джраберд) и юго-восточном (Корган) направлениях линии соприкосновения ВС НКР и Азербайджана были зафиксированы попытки проникновения диверсионных групп ВС Азербайджана. «Передовые подразделения ВС НКР засекли действия азербайджанских диверсионных групп. В обоих направлениях перейдя к организованной обороне и нанеся противнику ощутимые потери, армянские военнослужащие отбросили противника на исходные позиции. В результате перестрелки, отважно выполняя поставленную боевую задачу, на боевых позициях от огнестрельного ранения погиб младший сержант Армен Ованнисян», – говорилось в сообщении Министерства обороны НКР. 20 января президент НКР Бако Саакян подписал указ, согласно которому за мужество, проявленное при защите государственной границы НКР, младший сержант N-ской воинской части Армии обороны НКР Армен Ованнисян был посмертно награжден медалью «За мужество». Для выяснения подробностей инцидента ведется следствие.

ПРИХОДСКАЯ ЖИЗНЬ

ЧРАКАЛУЙЦ - РОЖДЕСТВЕНСКИЙ СОЧЕЛЬНИК

Армянская Церковь осталась верна древнейшим апостольским преданиям и канонам, совместно отмечая праздники Рождества Христова и Богоявления 6-го января.

Армяне отмечают Святое Рождество и Богоявление с вечера 5 января, так как церковный день сменяется после вечерней службы в 18:00.

В этот вечер в церкви Сурб Геворг было довольно многолюдно, ежегодно сюда собираются прихожане вместе со своими семьями, родными и близкими, чтобы воочию узреть лучезарный свет Рождества Христова.

Духовный пастырь армян Волгограда священник Малахия Оганян провёл Богослужение - Святую Литургию Чракалуйца.

Во время проповеди Отец Малахия прочёл отрывки из библейской Книги Бытия, поведал евангельское повествование о таинстве рождения Богомладенца: «Рождением Спасителя Бог и человек встретились на Земле. Христос пришел, чтобы примирить человека со своим Творцом, взяв на себя грехи наши, открыл нам дорогу новой жизни». Христос родился и нам явился! Вам и нам – Благая весть!

По завершении Святой Литургии прихожане зажгли свои свечи и лампады с главной свечи алтаря и забрали к себе домой, как символ света Божьего - света Вифлеемской звезды и Рождества Христова.

НОВОГОДНЯЯ СКАЗКА

29 декабря в зале притчевого дома при Армянской церкви Волгограда нашей молодёжью с участием учеников воскресного класса и ансамбля песни и танца «Артуйт» был представлен спектакль на новогоднюю тему.

На мероприятии присутствовали духовный пастырь армян Волгограда Малахия Оганян, родители воспитанников воскресного класса и множество приглашенных гостей.

Спектакль-сказка под названием «12 жам минчев Нор тари» («За 12 часов до Нового года») была основана на персонажах и героях армянского и русского фольклора. За двенадцать часов до начала нового года, по сценарию, жены героев сказки - Назара и Паноса выгоняют мужчин из дома, чтобы они нашли «новый год» и ёлочку. «Новый год» украла Снежная Королева, а елочки растут только у Бабы-Яги. В дороге Назар и Панос встречаются и решают вместе найти «новый год» и елочку, встречая в лесу персонажей разных сказок, которые считают их глупцами. Им ничего не удается, и они за считанные минуты до наступления года, разочарованные возвращаются домой. Видя раздосадованные лица, все сказочные персонажи решают им помочь, и сами возвращают «новый год» и елочку.

Выступление закончилось тем, что все герои сказки и зрители дружно стали звать Деда Мороза старинным армянским названием «Каханд Пап», что в переводе означает дед, приносящий счастье, добро и веселье. Естественно, Каханд Пап со Снегурочкой всех поздравили, и, выслушав стихи в прочтении малышей, наградили воспитанников и детей новогодними подарками!

Сценаристами спектакля были - Акопян Арусяк и Никогосян Липарит, а в сценках участвовали: Петросян Давид (Назар), Алахвердян Хорен (Панос), Александян Алла (Устиян), Мардоян Левон (Буратино), Нерсисян Анна (Баба-Яга), Хачатрян Нарек (волк), Хачатрян Алла (Красная шапочка), Топалян Ани (Снежная королева), Татевосян Диана (белка), Хачатрян Ани (Мальвина), Никогосян Липарит (Дед Мороз), Памбухчян Астхик (Снегурочка); в массовке участвовали - Алахвердян Хекар и Топалян Ишхан; звукорежиссерами были - Никогосян Липарит и Африкян Арсен, а также помогали: Никогосян Нарек и Мардоян Симон.

ОТ АШТАРАКСКОЙ БАШНИ ДО БЕРЕГОВ ВОЛГИ

14 февраля в Волгоградском Музейно-выставочном центре (Дом художника) состоялась персональная выставка молодой художницы Ани Айрапетян. Поздравить и поддержать Ани пришли многочисленные соотечественники под предводительством отца Малахии, вместе с почётным консулом Республики Армения в РФ по Волгоградской области Гагиком Шамиряном и его заместителем Ашотом Григоряном, а также представители общественности Волгограда и коллеги – художники.

Волгоградскому зрителю и всем ценителям искусства не раз представлялась возможность познакомиться с работами молодых мастеров кисти из Армении.

Первое сияние ещё одной армянской звездочки на небосклоне художественного творчества Волгограда было отмечено в декабре прошлого года, когда Ани приняла участие в Международном фестивале молодых художников стран и народов Кавказа, как единственный представитель из Армении. Среди 120 работ авторов из разных регионов России и Южного Кавказа, представленных на фестивале, прошедшем в галерее современного искусства «Трапеция», картины Ани были отмечены как наиболее достойные, и в результате, она заняла первое место в номинации «Живопись». Вместе с другими участниками, Ани Айрапетян провела и мастер-классы по живописи, и в рамках фестиваля состоялся ещё целый ряд мероприятий, призванных привлечь внимание к творчеству кавказских народов.

О проведении данной выставки наша художница узнала довольно поздно, и поэтому, к сожалению, работы Ани не вошли в общий каталог, выпущенный по итогам выставки.

Ани родом из солнечного Аштарака. Раннее детство её прошло на Родине. В 1994 году вместе с семьёй переехали в Волгоград. Училась она в обычной средней общеобразовательной школе. Но уже с детства девочка стала проявлять большой интерес к художественному искусству. Любовь к рисованию, к сожалению, так и не привела её в раннем возрасте в художественную школу для получения более глубоких знаний и умений.

В 2004 году семья переехала в Армению. Спустя год в Ереване Ани

Ани Айрапетян с родителями и братом

поступила в Европейскую академию на факультет туризма, но не окончила учёбу по ранее выбранной специальности.

К своей любимой профессии Ани пришла при поддержке родственников, а точнее родной тёти, которая увидев её рисунки, первой заметила дарование и призвание будущей художницы. По стечению обстоятельств у этой же тёти супруг оказался художником, вот он то и отвёл юную Ани вместе с её работами на показ к одному из лучших специалистов по живописи Аветику Акобяну. Мэтру очень понравились её рисунки, и они стали серьёзно заниматься в Педагогическом университете, где А. Акобян и преподавал. Всего за три месяца удалось подготовиться к вступительным экзаменам, и Ани поступила в университет на факультет живописи. В 2010 году успешно окончив учёбу, она приобрела специальность «изобразительное искусство и черчение».

В 2011 г. судьба вновь связала семью Айрапетян с Волгоградом, и, начиная с 2012 г., Ани активно включилась в художественную жизнь легендарного города на Волге, став участницей многочисленных областных выставок.

Летом 2013 года в Ереване Ани прошла стажировку у выдающегося мастера кисти, знаменитого профессора, члена ЮНЕСКО Грайра Григоряна. Эти занятия способствовали дальнейшему творческому росту художницы.

В январе 2014 г. по благословению духовного пастыря армян Волгограда Отца Малахия и при непосредственном его содействии в Армянской церкви «Святого Георгия» у Ани состоялась первая персональная выставка, посвященная светлому празднику Рождества Христова.

Несмотря на молодость, как уже отметили зрители, Ани довольно хорошо рисует. Тематика картин художницы настолько разнообразна, что, наверное, не подлежит описанию. В них просматриваются нотки солнечной Армении, и библейский Арарат, и родной древнейший Аштарак, быт и труд жителей окрестных сёл, расположенных на высоком берегу реки Касах, а также современные мотивы. Желательно воочию увидеть эти картины каждому из нас на персональной выставке в Доме Художников, где автор представила на суд зрителей свои 58 работ. Выставка открыта с 14 февраля и будет действовать до 1 марта по улице Краснознаменская, 6.

А мы душевно поздравляем нашу молодую художницу с первыми победами и желаем дальнейших наилучших успехов в творчестве. И пожелаем, чтобы в её творчестве обязательно появились и работы с изображением матушки-реки Волги, а также достопримечательных мест города, в котором впервые её картины получили путёвку в жизнь.

Надеемся, что Ани сможет и предоставить время нашим деткам – маленьким прихожанам Армянской Церкви, желающим научиться азам живописи, и даст несколько мастер-классов для начавших шагать по её стопам.

Материалы полосы подготовила Гаянэ Качарян

ПРИХОДСКАЯ ЖИЗНЬ

ПРАЗДНИК ТЭАРНДАРАЧ И БЛАГОСЛОВЕНИЕ НОВОБРАЧНЫХ

ТЭАРНДАРАЧ (СРЕТЕНИЕ ГОСПОДНЕ) - ОДИН ИЗ ЛЮБИМЫХ ЦЕРКОВНО-НАЦИОНАЛЬНЫХ ПРАЗДНИКОВ В НАШЕМ НАРОДЕ

